



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

0014, ք.Երևան, Թբիլիսյան խճուղի 3/9
հեռախոս՝ (010) 20-10-93

ՀՀ Լոռու մարզպետարան

/հասցե՝ ՀՀ, Լոռի, ք. Վանաձոր, Հայքի հրապարակ /

ՌԴԴ 8.1 Ե4034/17
«15» մայիսի 2017թ.

Սույն գրությանը կից ուղարկվում է Ձեզ թիվ ՎԴ-6/0006/05/15 վարչական գործով Հայաստանի
Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի 12.05.2017թ. որոշումը:
Առդիր՝ դատարանի որոշումը «Գ» թերթից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՕԳՆԱԿԱՆ՝

ԷԴ.ԿՅՈՒՐԵՂՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱԲՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության
վարչական դատարանի վճիռ
Նախագահող դատավոր՝ Ա.Ալավերդյան

Վարչական գործ թիվ ՎՂ-6/0006/05/15

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

« 12 » մայիսի 2017թ.

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանը
հետևյալ կազմով՝ (պալատի նախագահի ղեկավարությամբ)

Նախագահող դատավոր՝ Արթուր Առաքելյան
դատավոր՝ Բրիտանիկա Մկրտչյան
դատավոր՝ Գալուստե Ղարիբյան



մասնակցությամբ՝ հայցվորի ներկայացուցիչ՝ Արտուր Հարությունյանի
պատասխանող՝ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի ներկայացուցիչ՝
Մխիթար Մերոբյանի

Քննելով ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի
/իրավաճախող՝ ՀՀ քաղաքաշինության նախարարություն/ կողմից բերված վերաքննիչ բողոքը՝
ըստ հայցի Ստեփան Արմենակի Սաֆարյանի ընդդեմ ՀՀ Լոռու մարզպետարանի և ՀՀ
քաղաքաշինության նախարարության /իրավախոջող՝ ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե/ անգործությունները ոչ իրավաչափ ճանաչելու և
պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջների մասին, թիվ ՎՂ-6/0006/05/15 վարչական
գործով ՀՀ վարչական դատարանի 21.04.2016թ. վճռի դեմ,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա.Ալավերդյան) 2015թ. փետրվարի 5-ի որոշմամբ
պետական տուրքի վճարումը հետաձգվել է:

ՀՀ վարչական դատարանի 2015թ. փետրվարի 5-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է
վարույթ:

ՀՀ վարչական դատարանի 2015թ. ապրիլի 13-ի որոշմամբ գործը նշանակվել է
դատաքննության:

ՀՀ վարչական դատարանի 2016թ. ապրիլի 21-ի վճռով հայցը բավարարվել է, ՀՀ
քաղաքաշինության նախարարի՝ 14.12.2012թ. N 296 հրամանի մասին օրենքով սահմանված
կարգով և ժամկետներում Ստեփան Արմենակի Սաֆարյանին չիրագեկելու հետ կապված ՀՀ
քաղաքաշինության նախարարության անգործությունը ճանաչվել է ոչ իրավաչափ, ոչ իրավաչափ

է ճանաչվել ՀՀ Լոռու մարզպետի կողմից ցուցաբերված այն անգործությունը, որի արդյունքում մինչև՝ 21.12.2012թ. չի նախապատրաստվել Ստեփան Արմենակի Սաֆարյանի հետ ֆինանսական աջակցության տրամադրման մասին պայմանագրի նախագիծ և դրա կնքման ժամի, օրվա և վայրի մասին նրան չի ծանուցվել, պարտավորեցվել է ՀՀ Լոռու մարզպետին՝ Ստեփան Արմենակի Սաֆարյանի հետ կնքել՝ «Մեկ սենյակի շահառու ճանաչված ընտանիքների հետ ֆինանսական աջակցության տրամադրման մասին» համապատասխան ձևի պայմանագիր:

Նշված վճռի դեմ ՀՀ քաղաքաշինության նախարարության անունից Էդգար Գևորգյանը 2016թ. հունիսի 16-ին բերել է վերաքննիչ բողոք:

Վերաքննիչ դատարանի 2016 թվականի հուլիսի 06-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Բողոքը վերադարձնելու մասին որոշումը ստանալուց հետո 15-օրյա ժամկետում բողոքաբերի կողմից վերացվել են բողոքում թույլ տրված խախտումները և Վերաքննիչ դատարանի 2016թ. օգոստոսի 05-ի որոշմամբ միջնորդությունը բավարարվել է, բողոք բերելու համար սահմանված ժամկետը հարգելի է համարվել, դատավարական իրավունքը վերականգնվել և վերաքննիչ բողոքը ընդունվել է վարույթ:

Վերաքննիչ դատարանի 2017թ. մարտի 15-ի որոշմամբ պատասխանող ՀՀ քաղաքաշինության նախարարությունը փոխարինվել է իրավահաջորդով՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեով:

Վերաքննիչ դատարանին վերաքննիչ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Գործի դատավարական նախապատմությունը.

Ստեփան Սաֆարյանը /այսուհետ նաև՝ Հայցվոր/ 2015 թվականի փետրվարի 2-ին դիմել էր ՀՀ վարչական դատարան /այսուհետ նաև՝ Դատարան/՝ ընդդեմ ՀՀ քաղաքաշինության նախարարության /այսուհետ նաև՝ Նախարարություն/, ՀՀ Լոռու մարզպետարանի՝ «Անգործությունները ոչ իրավաչափ ճանաչելու և պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջների մասին» հայցադիմումով:

Հայցվորը ներկայացրել էր երեք պահանջ. ՀՀ քաղաքաշինության նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 296 հրամանի մասին օրենքով սահմանված կարգով և ժամկետներում Հայցվորին չիրազեկելը ճանաչել որպես Նախարարության կողմից դրսևորած ոչ իրավաչափ անգործություն, ոչ իրավաչափ ճանաչել մինչև 2012 թվականի դեկտեմբերի 21-ը ֆինանսական աջակցության տրամադրման մասին պայմանագրի նախագիծը չնախապատրաստելու հետ կապված Լոռու մարզպետի կողմից ցուցաբերված անգործությունը, պարտավորեցնել Լոռու մարզպետին Հայցվորի հետ կնքել «Մեկ սենյակի շահառու ճանաչված ընտանիքների հետ ֆինանսական աջակցության տրամադրման մասին» պայմանագիր:

Դատարանի 2015 թվականի փետրվարի 5-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, հրավիրվել և անցկացվել են նախնական դատական նիստեր:

Դատարանի 2015 թվականի ապրիլի 13-ի որոշմամբ գործը նշանակվել է դատաքննության:

2016 թվականի ապրիլի 21-ին հրապարակված դատական ակտով Ստեփան Սաֆարյանի հայցն ամբողջությամբ բավարարվել է:

Դատարանը վճռել է.

«1. Ստեփան Արմենակի Սաֆարյանի հայցը բավարարել:

2. ՀՀ քաղաքաշինության նախարարի՝ 14.12.2012թ. թիվ 296 հրամանի մասին օրենքով սահմանված կարգով և ժամկետներում Ստեփան Արմենակի Սաֆարյանին չիրազեկելու հետ կապված ՀՀ քաղաքաշինության նախարարության անգործությունը ճանաչել ոչ իրավաչափ:

3. Ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի կողմից ցուցաբերված այն անգործությունը, որի արդյունքում մինչև՝ 21.12.2012թ. չի նախապատրաստվել Ստեփան Արմենակի Սաֆարյանի հետ ֆինանսական աջակցության տրամադրման մասին պայմանագրի նախագիծ և դրա կնքման ժամի, օրվա և վայրի մասին նրան չի ծանուցվել:

4. Պարտավորեցնել ՀՀ Լոռու մարզպետին՝ Ստեփան Արմենակի Սաֆարյանի հետ կնքել՝ «Մեկ սենյակի շահառու ճանաչված ընտանիքների հետ ֆինանսական աջակցության տրամադրման մասին» համապատասխան ձևի պայմանագիր: ...



6. ՀՀ քաղաքաշինության նախարարությունից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝ 4 000 /չորս հազար/ դրամ, որպես պետական տուրքի գումար:....»

2. *Վերաքննիչ բողոքի համար էական նշանակություն ունեցող փաստերը.*

ՀՀ Լոռու մարզի Սարամեջ համայնքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, համայնքի ղեկավարի կողմից սահմանված կարգով 2008 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ հաստատված՝ բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող անձանց ցուցակում Ստեփան Սաֆարյանը հաշվառված է 1 անձով՝ մեկսենյականոց բնակարան ստանալու համար:

ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 1515-Ն որոշմամբ /2-րդ կետ/ սահմանվել է աղետի գոտու գյուղական բնակավայրերում մեկ սենյակի շահառու ճանաչված ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման հետ կապված հարցերը կարգավորել ուղղակի ֆինանսական աջակցության տրամադրմամբ:

ՀՀ քաղաքաշինության նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 296 հրամանով հաստատվել է ՀՀ Լոռու մարզի գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած և փաստաթղթային փաթեթների ուսումնասիրության արդյունքներով մեկ սենյակի շահառու ճանաչված ընտանիքների ցուցակը համաձայն թիվ 1 հավելվածի: Ստեփան Սաֆարյանն ընդգրկվել է նշված ցուցակում 49-րդ համարով:

4. 2012 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 03/13.1/6589-12 գրությամբ Հայցվորը տեղեկացվել է, որ ինքը ճանաչվել է մեկ սենյակի շահառու և նրա խնդիրը պետք է լուծվի ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 1515-Ն որոշմամբ սահմանված վերջնաժամկետում՝ մինչև 2012 թվականի դեկտեմբերի 21-ը, որոշմամբ նախատեսված՝ 3.0 մլն. դրամի չափով ֆինանսական աջակցության տրամադրմամբ:

Վերաքննիչ բողոքի հիմնավորումները և իրավական վերլուծությունը.

Ուսումնասիրելով թիվ ՎԴ-6/0006/05/15/ վարչական գործով դատարանի 2016 թվականի ապրիլի 29-ի վճիռը, գործի նյութերը և համադրելով դրանք կիրառման ենթակա իրավադրոշմների հետ՝ Նախարարությունը գտնում է, որ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա և վճիռը ենթակա է բեկանման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝

Դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Դատարանը դատական ակտի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը պետք է լինի օրինական և հիմնավորված: Գործն ըստ էության լուծող դատական ակտը հիմնավորվում է միայն դատական նիստում հետազոտված ապացույցներով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս՝

1/ գնահատում է ապացույցները.

2/ որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

Վճռի պատճառաբանական մասը բովանդակում է՝

1/ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

2/ գործի լուծման համար նշանակություն չունեցող փաստերը՝ շարադրելով դատարանի եզրահանգումները յուրաքանչյուր փաստի ապացուցված լինելու վերաբերյալ և գնահատելով



տվյալ փաստի հաստատման կամ մերժման համար պիտանի՝ դատավարության մասնակիցների ներկայացրած յուրաքանչյուր ապացույցը.

...
4/ եզրահանգում որևէ ապացույց անթույլատրելի, ոչ վերաբերելի կամ ապացուցողական ուժ չունեցող համարելու մասին՝

ա. հղում կատարելով այն իրավանորմերին, որոնց հիման վրա ապացույցը ճանաչվել է անթույլատրելի, ոչ վերաբերելի կամ ապացուցողական ուժ չունեցող,

բ. շարադրելով այն փաստերը, որոնց հիման վրա դատարանը եկել է մման եզրահանգման.

5/ եզրահանգում՝ դատավարության մասնակիցների պահանջների և առաքելությունների հիմնավորվածության վերաբերյալ.

Տվյալ դեպքում Նախարարության կողմից դատարանին ներկայացվել էր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացույց, այն է՝ 2013 թվականի հունվարի 31-ին ՀՀ քաղաքաշինության նախարարին հասցեագրված Հայցվորի դիմումը:

Հայտնել է, որ դիմումից հստակ երևում է, որ Հայցվորը ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 1515-Ն որոշմամբ սահմանված ժամկետում ֆինանսական աջակցության տրամադրման մասին պայմանագիրը չի կնքել ոչ թե ՀՀ քաղաքաշինության նախարարի թիվ 296 հրամանի մասին իրազեկված չլինելու պատճառով, այլ հինգսենյականոց բնակարան ստանալու ակնկալիքից ելնելով:

Դիմումում Հայցվորը, մասնավորապես, գրել է. «Քանի որ դիմում եմ ներկայացրել և սպասում էի դիմումի պատասխանի 5 սենյականոց բնակարանի այդ պատճառով փաստաթղթեր չեմ ներկայացրել»:

Սրանից հետևում է, որ Հայցվորը ֆինանսական աջակցության տրամադրման մասին պայմանագիրը չի կնքել ոչ թե ՀՀ քաղաքաշինության նախարարության դրսևորած «անգործության» պատճառով, այլ ավելի մեծ մակերեսով բնակարան ստանալու ակնկալիքով: Ելնելով գործի բոլոր փաստերի, ապացույցների բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտման և գնահատման սկզբունքից՝ դատարանը պարտավոր էր քննության առնել Նախարարության կողմից ներկայացված ապացույցը՝ 2013 թվականի հունվարի 31-ին Նախարարությանը հասցեագրված Հայցվորի դիմումը և վճռի պատճառաբանական մասում այդ մասին արտահայտեր իր դիրքորոշումը, ինչը չի արել:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը՝ հայտնել է, որ Դատարանը չի պահպանել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վերը նշված հոդվածների պահանջները, թույլ է տվել դատավարական իրավունքի նորմերի խախտում, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծմանը:

Դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել և գնահատել գործի փաստերը և անտեսել է ներկայացված ապացույցը:

Հետևաբար դատական ակտն օրինական և հիմնավորված չէ:

Հայտնել է, որ ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից ոչ իրավաչափ անգործություն ցուցաբերելու մասին Դատարանի դիրքորոշումը անհիմն է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ դատական սխալի հիմքով դատական ակտի բեկանման հիմքերն են՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը դատական ակտի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ դատական ակտը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում և փոփոխում է վարչական դատարանի ակտը՝ կայացնելով նոր դատական ակտ, եթե վարչական դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից, իսկ բողոքարկված և չբեկանված մասով դատական ակտը թողնում է անփոփոխ:



Սույն գործով հաստատված փաստական հանգամանքները ՀՀ վարչական վերաքննիչ դատարանին թույլ են տալիս ՀՀ վարչական դատարանի 2016 թվականի ապրիլի 21-ի վճիռը բեկանելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հրապարակվելուց անմիջապես հետո գործն ըստ էության լուծող դատական ակտը հանձնվում է դատավարության մասնակիցներին: Դատավարության մասնակիցներից որևէ մեկի ներկա չլինելու դեպքում գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինակը հրապարակման կամ դրան հաջորդող օրն ուղարկվում է նրան:

ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2000 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 36 որոշման 3-րդ կետի համաձայն՝ որպես կանոն, բողոքարկման բաց թողնված ժամկետը պետք է դիտվի հարգելի և վերականգնվի նաև այն դեպքում, երբ ժամկետը բաց է թողնվել դատարանի կողմից դատական ակտի պատճենը օրենքով նախատեսված ժամկետից ավելի ուշ հանձնելու պատճառով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի համաձայն՝ 3-րդ մասի համաձայն՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվում է այն դատարան, որտեղ պետք է կատարվի դատավարական գործողությունը: Միջնորդության ներկայացման հետ միաժամանակ, եթե դա հնարավոր է, կատարվում են անհրաժեշտ դատավարական գործողությունները (դիմումի, բողոքի, փաստաթղթերի ներկայացում և այլն), որոնց կատարման ժամկետը բաց է թողնվել:

Սույն գործով 2016 թվականի ապրիլի 21-ի վճիռը Դատարանը փոստային առաքմանն է հանձնել 2016 թվականի մայիսի 18-ին, իսկ Նախարարությունն այն ստացել է 2016 թվականի մայիսի 20-ին:

Վերաքննիչ բողոքի պահանջը.

Ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով, 134-րդ հոդվածով, 145-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ խնդրել է դատարանին բեկանել և փոփոխել ՀՀ վարչական դատարանի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի վճիռը և նոր դատական ակտով ՀՀ քաղաքաշինության նախարարության դեմ ներկայացված պահանջի մասով հայցը մերժել:

3. Գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով բողոքը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այն ենթակա է մերժման, հետևյալ հիմնավորմամբ:

Սույն վարչական գործը քննվել է Ստեփան Սաֆարյանի հայցի հիման վրա, որով ներկայացված են եղել հետևյալ պահանջները.

1. ՀՀ քաղաքաշինության նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 296 հրամանի մասին օրենքով սահմանված կարգով և ժամկետներում Ստեփան Սաֆարյանին չիրազեկելը ճանաչել որպես Նախարարության կողմից դրսևորած ոչ իրավաչափ անգործություն,

2. ոչ իրավաչափ ճանաչել մինչև 2012 թվականի դեկտեմբերի 21-ը ֆինանսական աջակցության տրամադրման մասին պայմանագրի նախագիծը չնախապատրաստելու հետ կապված Լոռու մարզպետի կողմից ցուցաբերված անգործությունը,

3. պարտավորեցնել Լոռու մարզպետին Ստեփան Սաֆարյանի հետ կնքել «Մեկ սենյակի շահառու ճանաչված ընտանիքների հետ ֆինանսական աջակցության տրամադրման մասին» պայմանագիր:

ՀՀ վարչական դատարանը հայցը բավարարել է՝ վճռելով.

- ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.12.2012թ. թիվ 296 հրամանի մասին օրենքով սահմանված կարգով և ժամկետներում Ստեփան Արմենակի Սաֆարյանին չիրազեկելու հետ կապված ՀՀ քաղաքաշինության նախարարության անգործությունը,

- ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի կողմից ցուցաբերված այն անգործությունը, որի արդյունքում մինչև 21.12.2012թ. չի նախապատրաստվել Ստեփան Արմենակի Սաֆարյանի հետ ֆինանսական աջակցության տրամադրման մասին պայմանագրի նախագիծ և դրա կնքման ժամի, օրվա և վայրի մասին նրան չի ծանուցվել,



- պարտավորեցնել ՀՀ Լոռու մարզպետին՝ Ստեփան Արմենակի Սաֆարյանի հետ կնքել «Մեկ սենյակի շահառու ճանաչված ընտանիքների հետ ֆինանսական աջակցության տրամադրման մասին» համապատասխան ձևի պայմանագիր:

ՀՀ վարչական դատարանի վճռի դեմ՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության դեմ ներկայացված պահանջի մասով հայցը մերժելու խնդրանքով ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի /իրավաճախորդ՝ ՀՀ քաղաքաշինության նախարարություն/ կողմից բերված բողոքում նշվել է, որ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, որոնք ազդել են գործի ելքի վրա: Միևնույն ժամանակ բողոքաբերի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ, 27-րդ հոդվածների, 114-րդ հոդվածի 5-րդ մասի, 124-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի և 126-րդ հոդվածի 4-րդ մասի իրավադրույթների վկայակոչման արդյունքում արձանագրվել է, որ Նախարարության կողմից դատարանին ներկայացված՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացույցից, այն է՝ 2013 թվականի հունվարի 31-ին ՀՀ քաղաքաշինության նախարարին հասցեագրված Հայցվորի դիմումից հստակ երևում է, որ Հայցվորը ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 1515-Ն որոշմամբ սահմանված ժամկետում ֆինանսական աջակցության տրամադրման մասին պայմանագիրը չի կնքել ոչ թե ՀՀ քաղաքաշինության նախարարի թիվ 296 հրամանի մասին իրազեկված չլինելու պատճառով, այլ հինգսենյականոց բնակարան ստանալու ակնկալիքից ելնելով: Ըստ բողոքաբերի՝ նշվածից հետևում է, որ Հայցվորը ֆինանսական աջակցության տրամադրման մասին պայմանագիրը չի կնքել ոչ թե ՀՀ քաղաքաշինության նախարարության դրսևորած «անգործության» պատճառով, այլ ավելի մեծ մակերեսով բնակարան ստանալու ակնկալիքով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է հետևյալը:

ՀՀ կառավարության՝ 29.11.2012թ. N 1515-Ն որոշման 2-րդ կետով՝ ՀՀ Լոռու, Շիրակի և Արագածոտնի մարզերի գյուղական բնակավայրերում, ինչպես նաև ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում մեկ սենյակի շահառու ճանաչված ընտանիքների բնակարանային պայմաններն ուղղակի ֆինանսական աջակցության տրամադրման միջոցով բարելավելու նպատակով՝ ՀՀ 2012թ. պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է՝ 1,146,000.0 հազար դրամ:


Նույն որոշման 4-րդ կետով սահմանվել է, որ նույն որոշման 2-րդ կետում նշված՝ ֆինանսական աջակցություն ստանալու համար շահառու ճանաչված անձանց ֆինանսական աջակցությունը տրամադրվում է համապատասխան մարզպետարանների միջոցով՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամաններով հաստատված՝ մեկ սենյակի շահառու ճանաչված ընտանիքների ցուցակների համաձայն՝ մարզպետի և աջակցություն ստացող քաղաքացու միջև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ֆինանսական աջակցություն ստանալու մասին կնքված համապատասխան պայմանագրի հիման վրա: Հատկացվող գումարները փոխանցվում են ֆինանսական աջակցություն ստացող քաղաքացու անվամբ բանկում նախօրոք բացված ցպահանջ ավանդային հաշվին:

Նույն որոշման 5-րդ կետով հանձնարարվել է՝ ՀՀ քաղաքաշինության նախարարին՝ նույն որոշման 2-րդ կետում նշված՝ ֆինանսական աջակցություն ստանալուն հավակնող անձանց մեկ սենյակի շահառու ճանաչելու գործընթացն ավարտել 2012թ. դեկտեմբերի 14-ին:

ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.12.2012թ. թիվ 296 հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատվել է՝ ՀՀ Լոռու մարզի գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, 2008թ. դեկտեմբերի 15-ի դրությամբ սահմանված կարգով հաշվառված և փաստաթղթային փաթեթների ուսումնասիրության արդյունքներով մեկ սենյակի շահառու ճանաչված ընտանիքների ցուցակը՝ համաձայն թիվ 1 հավելվածի, որով Ստեփան Սաֆարյանը ճանաչվել է մեկ սենյակի շահառու:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ վարչական վարույթի մասնակիցներն են՝ վարչական ակտի հասցեատերը՝ այն անձը, ով դիմել է վարչական ակտ ընդունելու համար /դիմող/, կամ այն անձը, ում նկատմամբ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ընդունելու է վարչական ակտ:

Ինչպես իրավափոփոխ արձանագրել է ՀՀ վարչական դատարանը, հայցվոր Ստեփան Սաֆարյանը հանդիսացել է վերը նշված՝ թիվ 296 հրամանի ընդունման համար հարուցված



վարչական վարույթի մասնակից, քանի որ նրա նկատմամբ Նախարարն իր նախաձեռնությամբ ընդունել է վարչական ակտ:

Իրավահարաբերության պահին գործող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարույթի մասնակիցներին վարչական ակտի ընդունման մասին իրազեկում է նույն հոդվածով նախատեսված հանձնման կամ հրապարակման եղանակով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտը, ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին: Դա կարող է իրականացվել պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ, հասցեատիրոջը ստորագրությամբ առձեռն հանձնելու, ինչպես նաև օրենքով սահմանված այլ եղանակներով:

Այսինքն՝ թիվ 296 հրամանը, դրա ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, պետք է հանձնվեր վարույթի մասնակից հանդիսացող Ստեփան Սաֆարյանին, ինչը կարող էր իրականացվել պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ, հայցվորին ստորագրությամբ առձեռն հանձնելու, ինչպես նաև օրենքով սահմանված այլ եղանակներով:

Հայցվոր՝ Ստեփան Սաֆարյանը ներկայացրած հայցադիմումով ՀՀ վարչական դատարանին հայտնել է, որ 14.12.2012թ. թիվ 296 հրամանն օրենքով սահմանված ժամկետում չի ուղարկվել իրեն և դրա մասին ինքն իրազեկվել է 23.12.2012 թվականին:


ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը դատական ակտի մեջ պետք է պատճառաբանի նման համոզմունքի ձևավորումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է նաև ներկայացնել վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով: Իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցները հետազոտելուց հետո գործի ելքը պայմանավորող որևէ փաստ մնում է չապացուցված, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման բեռը կրող կողմը: Նույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ ապացուցման բեռը կրում է ճանաչման հայցով վարչական մարմինը՝ այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտի, ինչպես նաև որևէ կատարված գործողության կամ թույլ տրված անգործության իրավաչափությունը հիմնավորող փաստերի մասով:

Նշվածից հետևում է, որ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով, իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ապացույցների գնահատումը, որպես ապացուցման գործընթացի տարր, մտավոր, տրամաբանական գործունեություն է, որի արդյունքում դատարանի կողմից եզրահանգում է արվում ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության և ապացուցման արժեքի մեջ մտնող




հանգամանքների բացահայտման համար ապացույցների համակցության բավարարության մասին (տե՛ս, Ջաջուռի գյուղապետարանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առնված գույքի կադաստրի պետական կոմիտեի և մյուսների թիվ ՎԴ-5/0029/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ վարչական դատավարությունում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունն ապացուցելու ծանրությունը՝ ապացուցման բեռը, օրենսդրի կողմից դիտարկվում է որպես գործին մասնակցող անձի դատավարական պարտականություն, որն ապահովված է որոշակի անբարենպաստ հետևանքների առաջացման սպառնալիքով: Վարչական դատավարությունում բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի մնալու բացասական (անբարենպաստ) հետևանքները, ըստ էության, հանգում են հետևյալին. բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայության կամ բացակայության վիճելի մնալու դեպքում դատարանը կարող է համապատասխան փաստի գոյությունն իրավաչափորեն համարել հերքված (չապացուցված): Վարչական դատավարությունում ապացուցման գործընթացի ճիշտ կազմակերպման, ապացուցողական նյութի լրիվության, վարույթի բնականոն ընթացքի ապահովման և արդյունքում գործի ճիշտ լուծման համար կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե դատավարության կոնկրետ որ մասնակցի վրա է ընկնում գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման ծանրությունը կամ ապացուցման բեռը: Ըստ այդմ՝ գործին մասնակցող անձանց միջև ապացուցման պարտականությունը բաշխելու հարցը կարգավորող օրենսդրական նորմերը՝ ապացուցման բեռի բաշխման կանոնները, հանդես են գալիս այն կառուցակարգի դերում, որը թույլ է տալիս գործով ձեռք բերված ապացույցների ոչ բավարար լինելու, դրանց հակասականության կամ բացակայության պայմաններում որոշելու այն սուբյեկտին, ով պարտավոր է ներկայացնել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները հաստատող ապացույցները և պետք է կրի այդ պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու բոլոր անբարենպաստ հետևանքները:

Վերոգրյալ իրավադրույթների համակարգային վերնուծության արդյունքում Վերաքննիչ դատարանը սույն գործի նյութերի ուսումնասիրության արդյունքում փաստում է, որ առկա չէ ապացույց ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.12.2012թ. թիվ 296 հրամանի մասին օրենքով սահմանված կարգով և ժամկետում հայցվորին իրազեկելու և որոշումը նրան հանձնելու մասին, ինչը նշանակում է, որ ՀՀ քաղաքաշինության նախարարությունը, ցուցաբերելով ոչ իրավաչափ անգործություն, չի կատարել վերը նշված՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իր պարտականությունը, այսինքն՝ 14.12.2012թ. թիվ 296 հրամանը դրա ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ, հայցվորին ստորագրությամբ առձեռն հանձնելու, ինչպես նաև օրենքով սահմանված այլ եղանակներով, չի հանձնել վարույթի մասնակից հանդիսացող՝ Ստեփան Սաֆարյանին:

Հետևաբար իրավաչափ է Վարչական դատարանի եզրահանգումն այն մասին, որ ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.12.2012թ. թիվ 296 հրամանի մասին օրենքով սահմանված կարգով և ժամկետներում հայցվորին չիրազեկելու հետ կապված ՀՀ քաղաքաշինության նախարարության անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մասին հայցը հիմնավոր է և ենթակա բավարարման:

Ինչ վերաբերում է բողոքաբերի վերոնշյալ պնդմանը, ապա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ նշված դիմումով հայցվորի հայտնած տեղեկությունը որևէ հիմք հանդիսանալ չի կարող ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.12.2012թ. թիվ 296 հրամանի մասին օրենքով սահմանված կարգով և ժամկետներում հայցվորին չիրազեկելու հետ կապված ՀՀ քաղաքաշինության նախարարության անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մասին հայցապահանջը մերժելու համար, քանի որ, ինչպես վերը նշվեց, ՀՀ քաղաքաշինության նախարարությունը, ցուցաբերելով ոչ իրավաչափ անգործություն, չի կատարել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իր պարտականությունը, այն է 14.12.2012թ. թիվ 296 հրամանը դրա ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, պատվիրված



վիտատով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ, հայցվորին ստորագրությամբ առձեռն հանձնելու, ինչպես նաև օրենքով սահմանված այլ եղանակներով, չի հանձնել վարույթի մասնակից հանդիսացող՝ Ստեփան Սաֆարյանին:

Հետևաբար ամբողջ վերոգրյալի հաշվառմամբ Վերաքննիչ դատարանը գտնում է բողոքն անհիմն է և ենթակա մերժման:

Քանի որ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, կողմը, որի բողոքը մերժվել է, կրում է դատական ծախսերի հատուցման պարտավորությունը, իսկ բողոքաբերի կողմից պետական տուրքը նախապես վճարվել է, ուստի դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ, 141-րդ, 144-152-րդ և 156-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Վերաքննիչ բողոքը մերժել՝ թիվ ՎԴ-6/0006/05/15 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 21.04.2016թ. վճիռը թողնելով անփոփոխ:

Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝
Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ



ԴԱՏԱՎՈՐ՝
Զ.ՄԿՈՅԱՆ

